Արձանագրություն N 2
ՀՀ առողջապահության նախարարության կարիքների համար բեռների մաքսազերծման և պահեստավորման ծառայությունների ձեռքբերման «ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2018/8/1» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան «02» «Մայիսի» 2018թ.
ժամը 17:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ Մ.Մխիթարյան

Հանձնաժողովի անդամներ Ա.Մկրտչյան
Ն.Թովմասյան

Հանձնաժողովի քարտուղար Հ.Մնացականյան

1. Ընթացակարգի հայտերի բացման մասին

(Մ.Մխիթարյան)

Ընդունել ի գիտություն, որ 18.04.18թ. հրապարակվել է հրավեր armeps համակարգում:

Հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.

Հ/Հ	Մասնակցի անվանում	Կազմակերպության իրավաբանական և էլ. հասցեներ	Կազմակերպության ՀՎՀՀ-ն
1	«Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ	ք.Երևան, Տիտոգրադյան 14/10 anmohk@mail.ru	02508003

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

(Մ.Մխիթարյան)

Մասնակցի կողմից ներկայացված ծրարում առկա է հրավերով պահանջվող փաստաթղթերը, բացառությամբ մրցույթին մասնակցելու դիմումը՝ Հավելված 1-ը և գնային առաջարկին կից պահանջվող Հավելված 1.1-ը, ինչպես նաև պահանջվող լիցենզիա չի ներկայացվել:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ որոշվեց նիստը կասեցնել մինչև 2018թ. մայիսի 2-ը ժամը 18:00 և Մասնակցին առաջարկել շտել արձանագրված վերոնշյալ անհամապատասխանությունները:

Մասնակիցը սահմանված ժամկետին շտկել է անհամապատասխանությունները:
Գնման հայտը գնահատվել է բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման հրավերի պահանջներին համապատասխանության մասին

(Մ.Մխիթարյան)

Մասնակցի կողմից ներկայացված ծրարը կազմված է հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Յուրաքանչյուր մասնակցի ներկայացված հայտերի գնահատման և ամփոփման մասին

(Մ.Մխիթարյան)

Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում է հրավերի պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

5. Մասնակիցների առաջարկած գների մասին

(Մ.Մխիթարյան)

Կազմակերպության կողմից ներկայացված ծառայության գինը /Ապրանքների ներառյալ հատուկ ձերմային ռեժիմով պահպանման, մաքսային ձևակերպման, կատարողի պահեստ տեղափոխման ծախսերի հանրագումար/ կազմում է 822.500 ՀՀ դրամ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

6. Հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

(Մ.Մխիթարյան)

Հարցումներ չեն եղել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

7. Առաջին և հաջորդաբար տեղերն զբաղեցրած մասնակիցներին որոշելու մասին

(Մ.Մխիթարյան)

«ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2018/8/1» ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչել «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

8.Առաջին տեղը զբաղեցրած մասնակցին որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված փաստաթղթերի ներկայացման մասին

(Մ.Մխիթարյան)

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետը՝ որոշվեց առաջարկել «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին ծանուցման պահից 3 աշխատանքային օրվա /վերջնաժամկետը 05.05.18թ./ ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

9. ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցման ներկայացման մասին

(Մ.Մխիթարյան)

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ որոշվեց ՀՀ ԿԱ ՊԵԿ հարցում ներկայացնել «ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2018/8/1» ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի, Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև հայտը ներկայացվելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը ներկայացված գնային առաջարկից պակաս չլինելու և հայտը ներկայացվելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը ակտիվների հաշվեկշռային արժեքին չգերազանցելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

10. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը,

ժամը և վայրը հաստատելու մասին

(Մ.Մխիթարյան)

«ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2018/8/1» ծածկագրով գնման ընթացակարգի հաջորդ նիստը տեղի կունենա Կառավարական թիվ 3 շենքում, փոքր դահլիճում համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից պահանջվող փաստաթղթերը ներկայացնելուց հետո:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Մ.Մխիթարյան

Անդամներ՝ ---------- Ա.Մկրտչյան

---------- Ն.Թովմասյան

Քարտուղար՝ ---------- Հ. Մնացականյան